ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Էրիկ Մայիսի Գրիգորյանի՝ «Բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ատենախոսությունը նվիրված է ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրների գիտական հետազոտությանը և դրա վերաբերյալ արդյունքների և նոր մոտեցումների ներկայացմանը: Ատենախոսության թեման չափազանց արդիական է և հայ հեղինակների կողմից ոչ բավարար հետազոտված: Վարքագծային ֆինանսների նկատմամբ ԱՄՆ-ի, իսկ այնուհետև միջազգային գիտական հանրության աճող ուշադրությունը թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ 20-րդ դարի 80-ական թվականներից ֆինանսական շուկաների բուռն զարգացումը ուղեկցվեց շուկայական անոմոլիաների և ձախողումների կտրուկ աճով: Ավանդական ֆինանսական տեսությունների համար լուրջ փորձություն էր նաև 2008-2009 թթ. գլոբալ ռեցեսիան և 2020 թվականի համավարակի շոկը, որի ֆինանսական հետևանքները չհաջողվեց կանխատեսել: Վարքագծային ֆինանսների ուսումնասիրությունը գիտամեթոդական տեսանկյունից ավելի է կարևորվում վարքագծային ֆինանսների զարգացմանը նպաստելու համար Նոբելյան մրցանակի արժանացած մի շարք տնտեսագետների ֆոնին: Մյուս կողմից՝ կայուն գների մակարդակի ապահովում, աղքատության հաղթահարում, գործազրկության մակարդակի կրճատում հիմնախնդիրների լուծման նպատակով առաջ է գալիս բնակչության ֆինանսական վարքագծի ուսումնասիրության անհրաժեշտություն, որի միջոցով հնարավոր կլինի գնահատել ներդրումային որոշումների կայացման ռացիոնալությունը կամ իռացիոնալությունը, արդյունքում էլ՝ նպաստել հուզականության հիման վրա ընդունված որոշումների պատճառով առաջացած վնասների կրճատմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի ու ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրները բավարար խորությամբ հետազոտված չեն՝ բազմակողմանի հետազոտություն իրականացնելու և վերջինի

արդյունքները գնահատելու օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ինչպես գիտամեթոդական, այնպես էլ գործնական մակարդակներում: Վերջինը կարող է նպաստել ՀՀ-ում ֆինանսական գրագիտության բարձրացմանը, ֆինանսական վարքագծի, առաջացող ռիսկերի և հնարավորությունների գնահատման և կառավարման բարելավմանը: Դրանց շնորհիվ բնակչությունը կարող է առավել արդյունավետ կառավարել իր ֆինանսական հոսքերը, ինչը, իր հերթին, կարող է ազդեցություն ունենալ ամբողջ տնտեսության վրա: Նշվածը միանշանակորեն ընդգծում է ուսումնասիրության թեմայի արդիականությունը և հետազոտության անհրաժեշտությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Հեղինակի կողմից, որպես հետազոտության հիմնական նպատակ է դրվել բացահայտել ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի, ներդրումային որոշումների կայացման և դրանց հետ առնչվող հիմնախնդիրները, դրանց վրա ազդող գործոնների միջև կապերի, օրինաչափությունների ու դրսևորումների գնահատման հիման վրա մշակել և առաջարկել ֆինանսական վարքագծի բարելավման ուղիների գիտականորեն հիմնավորված մոտեցումներ, որին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- բացահայտել վարքագծային ֆինանսների էությունը, կապն ավանդական ֆինանսների հետ,
- հավաքագրել, մշակել և ամփոփել բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներ և այլ տվյալներ,
- վիճակագրական ցուցանիշների և մոդելների օգնությամբ գնահատել ավանդների ներդրման վարքագիծը որոշող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը,
- վիճակագրական ցուցանիշների և մոդելների օգնությամբ գնահատել վարկավորման վարքագիծը որոշող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը,
- գնահատել ֆինանսական վարքագիծը որոշող վարքագծային գործոնների ազդեցությունը,

- բացահայտել բնակչության ֆինանսական վարքագծին առնչվող առկա հիմնախնդիրները, հետազոտության հիման վրա մշակել ֆինանսական վարքագծի բարելավման ուղիների մոտեցումներ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 116 էջի վրա (առանց հավելվածի):

Ներածությունում հիմնավորվել են ատենախոսության հրատապությունը և արդիականությունը, սահմանվել են նպատակն ու խնդիրները, ներկայացվել ուսումնասիրության առարկան և օբյեկտը, օգտագործված տեղեկատվության աղբյուրները, ստացված գիտական արդյունքներն ու դրանց գործնական կիրառությունը:

Ատենախոսության առաջին՝ «Վարքագծային ֆինանսների էությունն ու տեսամեթոդական հիմքերը» գլխում հեղինակի կողմից ներկայացվել են հիմնականում արևմտյան ժամանակակից ֆինանսների գրականությունում առկա վարքագծային ֆինանսների վերաբերյալ սահմանումներն ու ձևակերպումները: Տվյալ գլխում մասնագիտական գրականության ուսումնասիրության հիման վրա ներկայացվել է նաև վարքագծային ֆինանսների և ֆինանսների ավանդական տեսության համեմատական վերլուծությունը, որից հետո՝ ներդրումային որոշումների կայացումը հոգեբանական գործոնների ազդեցության համատեքստում: Այս գլխում գիտական նորույթ չի ձևավորվել և չի հիմնավորվել:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ռեզիդենտ տնային տնտեսությունների ավանդների ներդրման ու վարկավորման վարքագծի վերլուծությունը» գլխում նախ թեմային առնչվող բավականին հարուստ վիճակագրական ցուցանիշների ներկայացման և վերլուծության միջոցով հեղինակը նկարագրել է ՀՀ բնակչության սպառողական, ավանդների ներդրման, վարկավորման վարքագծերը: Այնուհետև՝ գնահատել է սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների, այդ թվում՝ ՍԳԻ-ի, միջին ամսական անվանական աշխատավարձի, շուկայական տոկոսադրույքի, ԱՄՆ դոլարի փոխարժեքի, պետական միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության ազդեցությունը և ուղղությունը նախ՝ բնակչության ավանդների ներդրման, ապա՝ վարկավորման վարքագծի

դեպքում: Այս գլխում ատենախոսի կողմից ձևակերպված գիտական նորույթների առաջին և երկրորդ կետերն են ամփոփված:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի բարելավման ուղիները» գլխի շրջանակում քննարկվել են արտասահմանյան և հայկական որոշ էմպիրիկ հետազոտություններ, վերլուծվել և ամփոփ ներկայացվել են ՀՀ բնակչության շրջանում անցկացված հարցման արդյունքները, դրա հիման վրա գնահատվել են բնակչության ֆինանսական վարքագիծը, ֆինանսական բավարարվածությունը, ֆինանսական սթրեսը, ֆինանսական գրագիտությունը: Երրորդ ենթագլխում հեղինակը հետազոտության հիման վրա առաջ է քաշել ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի բարելավման մոտեցումներ: Այս գլխում են տեղ գտել ատենախոսի կողմից ներկայացված երրորդ և չորրորդ գիտական նորույթների հեղինակային հիմնավորումները:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Տեսություններն ու մոտեցումները, որոնք տեղ են գտել ատենախոսությունում, կարող են օգտակար լինել վարքագծային ֆինանսների դասավանդման ժամանակ և դրա վերաբերյալ հետազոտություններ իրականացնելիս: Ստացված արդյունքները գործնականում օգտակար կարող են լինել բնակչությանը՝ սեփական ֆինանսական ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու, ֆինանսական ինստիտուտներին՝ հատկապես առավել արդյունավետ փաթեթային կառավարում իրականացնելու համար, պետական տնտեսական քաղաքականություն մշակողներին:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում հեղինակը ներկայացնում է մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ առանձնացնում է հետևյալ չորս կետերը.

- ավանդային ներդրումների վարքագծի վերլուծությամբ հստակեցվել և

գնահատվել են ՀՀ տնային տնտեսությունների խնայողության վարքագծի և ավանդների վրա ազդող գործոնները, այդ թվում՝ միջին ամսական անվանական աշխատավարձ, սպառողական գների ինդեքս, պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվ, ԱՄՆ դոլարի փոխարժեք, շուկայական տոկոսադրույք, ցույց է տրվել դրանց միջև կապի ուղղությունն ու բնույթը,

- վարկավորման վարքագծի վերլուծությամբ հստակեցվել և գնահատվել են ՀՀ տնային տնտեսությունների վարկերի վրա ազդող վերը նշված գործոնները, ցույց է տրվել դրանց միջև կապի ուղղությունն ու բնույթը,
- գնահատվել են ՀՀ-ում ֆինանսական գրագիտության, ֆինանսական սթրեսի և ֆինանսական բավարարվածության ազդեցությունը ֆինանսական վարքագծի վրա, նշված գործոնների միջև կապի ուղղությունն ու բնույթը,
- հետազոտվել և հիմնավորվել են ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կապը սոցիալ-տնտեսական տարբեր հիմնախնդիրների հետ, բացահայտվել կապի բնույթը, մշակվել և առաջադրվել են մոտեցումներ, որոնք կարող են նպաստել ներդրումային և ֆինանսական վարքագծի բարելավմանը սոցիալ-տնտեսական, գիտակրթական, ֆինանսական-ներդրումային ոլորտներում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված տենախոությունը զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնք թեև ատենախոսության գիտական արդյունքների և արժանիքներ վրա էական ազդեցություն չեն ունենում, սակայն ցանկալի է, որ հեղինակի կողմից հաշվի առնվեն հիմնականում հետագա գիտական աշխատանքների շրջանակներում: Մասնավորապես.

- Ատենախոսության մեջ խոսելով բնակչության խնայողություններից, հեղինակը դրանք ուսումնասիրում է հիմք ընդունելով առևտրային բանկերում տնային տնտեսությունների ավանդները և վարկավորման ծավալները: Սակայն մեր երկրի բնակչության խնայողությունների մեջ զգալի տեսակարար կշիռ է կազմում նաև կանխիկ փողի (ինչպես ՀՀ դրամով այնպես էլ արտարժույթով), թանկարժեք մետաղների, անշարժ և շարժական գույքի տեսքով խնայողությունները: Իհարկե, նշված ուղղություններից ոչ բոլորի համար են առկա որակյալ վիճակագրական

տվյալներ՝ գիտականորեն արժեքավոր և հիմնավոր եզրահանգումներ կատարելու համար, սակայն աշխատանքը կշահեր եթե հեղինակն անդրադարձ կատարեր նաև նշվածներին:

- Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը էկոնոմետրիկ վերլուծության միջոցով գնահատել է ՀՀ ռեզիդենտ տնային տնտեսությունների կողմից ավանդների ներդրման վարքագծի վրա սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը, չափն ու դրա ուղղությունը կարճաժամկետում և երկարաժամկետում: Մոդելները կառուցվել են ամսեկան ցուցանիշների հիման վրա և ընդգրկել են 2009-2020թթ. միջակայքը: ՀՀ վերաբերյալ իրականացված հետազոտությունների փորձը ցույց է տվել, որ Հայաստանի տնտեսական ցուցանիշներին առընչվող էմպիրիկ գնահատումների համար առավել նպատակահարմար է օգտագործել եռամսյակային ժամանակագրական շարքեր քանի որ դրանք առավել երկար ժամանակային միջակայքի համար են հասանելի, ինչպես նաև առավել լավ են արտացոլում ցուցանիշների վարքագիծը: Միևնույն ժամանակ, աշխատանքը կշահեր եթե առկա վիճակագրական ցուցանիշների անբավարարությունը հաշվի առնելով հեղինակը վերլուծեր նաև այլ երկրների համապատասխան ցուցանիշները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը ներկայացված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները և ստացված արդյունքների կիրառականությունը, և հիմնականում նպատակ ունեն բարելավելու և ուղղորդելու հեղինակին հետագա գիտական ուսումնասիրությունների ժամանակ:

Ատենախոսությունը աչքի է ընկնում իր դրական արժանիքներով, կատարված ինքնուրույն հետազոտություն, վերլուծված են տեղեկատվական բազմաթիվ աղբյուրներ, ուսումնասիրված են բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման վերաբերյալ տեսական մոտեցումներ, դրանց հիման վրա ներկայացված են կարևոր արդյունքներ: Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների ձևավորման նկատմամբ սահմանված պահանջներին: Ատենախոսությունը կարելի է որակել որպես բնակչության ֆինանսական վարքագծ

կարևոր հիմնախնդիրների հաջողված գիտական հետազոտություն, որի արդյունքում ձևավորվել են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Սեղմագրում ներկայացված 6 հոդվածները հրատարակված են ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականներում: Դրանք արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, նաև որպես գիտական նորույթ հեղինակի կողմից ներկայացված մոտեցումները:

Եզրակացնելով նշենք, որ Էրիկ Մայիսի Գրիգորյանի՝ «Բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, և հեղինակն արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու **Հ. Ի. Բեջանյան**
27 հունիսի 2022 թ.

Հ. Ի. Բեջանյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**
27 հունիսի 2022 թ.